

ՄԵԾ ՅՈՒԲԵԼԵԱՆԸ

Երէկ առտու Ֆէրիգիւղի Թաղ. Խորհուրդէն նամակ մը ստացայ, որով կը ծանուցուէր թէ հայ տառերու գիւտին 1800 ամեակը և հայ տպագրութեան չորեքհարիւր Յորելեանը հանդիսաւորապէս տօնելու համար Թաղ. Խորհուրդը որոշեր է յանձնախումբ մը կազմել, որու անդամ նշանակեր է նաեւ իմ «Ազնուութիւն»։ Եւ զիս կը հրաւիրէր այս առտու ներկայ գտնուիլ Թաղ. Խորհրդարանը, պատշաճ կարգադրութիւնները տնօրինելու համար։

Դժբախտաբար այդ հրաւերին չպիտի կրնամ պատասխանել, Ֆէրիգիւղէն, առժամապէս բաւական հեռու գտնուելով, բայց կ'ուզեմ թելադրանք մը ընել թէ՛ Թաղական Խորհուրդին և թէ՛ Յանձնախումբին։

Ֆէրիգիւղի մէջ մեծ Յորելեանին առթիւ մասնաւոր հանդէս կազմակերպելը ըստ իսխելացութիւն չէ և որչափ ալ ջանք թափուի կարելի չպիտի ըլլայ այդ հանգէսը փայլուն ընծայել։ Լաւագոյն է որ Ֆէրիգիւղ իր ուժը, եթէ քիչ մը ուժ ունի, միացնէ Բերային և հանդէսը միասին կազմակերպեն։ Նոյն իսկ Ղալաթիա, Պէշիկթաշ, Օրթաքէօյ և Բերայի մօտ գտնուած ուրիշ, թաղերը կրնան ամէնքը միանալ և միասին գործել։ Այն ատեն յուսալի է որ քիչ շատ փառաւոր բան մը կարելի է մէջտեղ հանել։ Հակառակ պարագային՝ փոքրիկ թաղերու մէջ կազմուած այդ մասնաւոր հանդէսները պիտի վիժին, որովհետեւ նոյնիսկ թաղեցիները պիտի փութան երթալ հո'ն ուր վստահ են թէ աւելի փայլուն բան մը պիտի տեսնեն։

Օրինակի համար, եթէ Ֆէրիքէօյ անջատաբար հանդէս մը կազմակերպուի, կրնաք վստահ ըլլալ որ Յորելեանին օրը բաւոր թաղեցի երիտասարդութիւնը պիտի փութայ Բերայի հանդէսին, Ֆէրիգիւղ առանձին թողլով Մարկոս էֆ. Նաթանեանը, որ իբրև հանդէսին կազմակերպիչներէն մին, չպիտի կրնայ տեղէն շարժիլ։

Այս անհանոյ հաւանականութեան առաջքը առնելու համար, կը կրկնեմ, չմիակ միջոցն է միանալ Բերայի, մէկ կողմ թողլով անձնասիրական փոքրոգի նկատումները։

Ֆէրիգիւղ Բերայի անչափահաս եղբայրն է գրեթէ և ինքն իր գլխուն բան մը չկրնար ընել։

Ես՝ իբրև Ֆէրիքէօյցի՝ կը խոստովանիմ ասիկա։